**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»**
**ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

«20» մարտի 2026թ. 73-Ն

ք. Երևան

## 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը և 10-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել Ստանդարտացման ամենամյա 2026 թվականի ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել տնօրենի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին:

***Տնօրենի***
***ժամանակավոր պաշտոնակատար*** **ՀԱՅԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ**

Հավելված 1

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Ստանդարտացման և չափագիտության
ազգային մարմին» ՓԲԸ
Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Հ. Զեյնալյան

# ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ

| Հ/Հ | Մշակման ենթակա ստանդարտների անվանումները | Նպատակը | Հիմքը | Պատասխանատու մարմինը | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1. | ՀՍՏ 415-2021 «Հեղուկներ նիկոտին մատակարարող էլեկտրոնային համակարգերի համար. Ընդհանուր տեխնիկական պայմաններ» Ազգային ստանդարտի փոփոխության մշակում | Նիկոտինի մատակարարման էլեկտրոնային համակարգերի (ՆՄՀ) համար նախատեսված պարկուճներում (քարթրիջներում) հեղուկի ծավալի որոշման մեթոդի սահմանում և ազգային ստանդարտով սահմանված դրույթների համապատասխանեցում ՀՀ կառավարության 2026 | ՀՀ կառավարության 2026 թվականի մարտի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 5-ի N 219-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 10-ի N 155-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 385-Ն որոշման պահանջների կատարում | «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ ՏՀ 11 «Ծխախոտ, ծխախոտային արտադրատեսակներ և դրանց փոխարինիչներ» ստանդարտացման տեխնիկական հանձնաժողով /համաձայնությամբ/ | 2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | ՀՍՏ 430-2023 «Առանց ծխախոտի տերևի նիկոտին պարունակող արտադրատեսակներ բերանացի (օրալ) օգտագործման համար. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»<br><br>Ազգային ստանդարտի փոփոխության մշակում | Ազգային ստանդարտով սահմանված դրույթների համապատասխանեցում ՀՀ կառավարության 2026 թվականի մարտի 26-ի N 385-Ն որոշմանը | ՀՀ կառավարության 2026 թվականի մարտի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 5-ի N 219-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 10-ի N 155-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 385-Ն որոշման պահանջների կատարում | «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ<br>ՏՀ 11 «Ծխախոտ, ծխախոտային արտադրատեսակներ և դրանց փոխարինիչներ» ստանդարտացման տեխնիկական հանձնաժողով /համաձայնությամբ/ | 2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում |